

Դանդաղաշարժ երեխաների հետ աշխատելու առանձնահատկությունները

Զանազան Ժանետա

Հանգուցային բառեր. տազնապայնություն, ուսումնական մոտիվ, ուսումնական գործընթաց, վախեր, չառաջադիմել, ուսուցիչ

Երեխաների դանդաղաշարժությունը լուրջ հիմնախնդիր է: Այդ պատճառով երեխան ունենում է լարվածություն, անվստահություն, տազնապ և նյարդայնություն: Հաճախ ընկնում է ուսման առաջադիմությունը, խաթարվում են միջանձնային հարաբերությունները դասընկերների և ուսուցիչների հետ: Իր առանձնահատկությունների պատճառով երեխան դպրոցում դժվար է հարմարվում, ցածր է ուսումնական մոտիվացիան, նրան անընդհատ նախատում են դանդաղկոտության, չհասցնելու, ուշանալու համար: Դանդաղաշարժ երեխայի համար, հատկապես առաջին դասարանում, թերևս ամենադժվար աշխատանքը գրել սովորելն է: Նրանք ունենում են վատ ձեռագիր, գրավորի ժամանակ տատեր են բաց թողնում, իսկ ընթերցանությունը վեր է ածվում իսկական փորձության: Նա իր դանդաղկոտությամբ խախտում է դասարանի և ուսուցչի աշխատանքի բնականոն ռիթմը: Այդ երեխաները լարվում ու շփոթվում են, երբ նրանց գրատախտակի մոտ են կանչում, նրանք լռում են նույնիսկ այն դեպքում, երբ սովորել են դասը: Նրանց նյարդայնացում են թեստերը, ստուգողական աշխատանքները: Նրանք չեն սիրում ֆիզկուլտուրայի դասը, քանի որ չեն սիրում մրցակցությունը:

Այդ ամենի արդյունքում ավելի է կարևորվում ուսուցչի դերն ու նշանակությունը նման երեխաների հետ աշխատանքում:

Կրթական հաստատությունները ներկայիս բարեփոխումների պայմաններում կոչված են աշակերտների ներուժը բացահայտելու, բարոյական արժեքները ձևավորելու անհրաժեշտության առջև:

Կրտսեր դպրոցականի համար առաջատար է դառնում ուսումնական գործունեությունը, որը էական փոփոխություններ է առաջ բերում նրա մտածելակերպում, վարքագծում, բարոյական և ճանաչողական ոլորտներում: Փոխվում է երեխայի սոցիալական կարգավիճակը, նա դառնում է դպրոցական:

Դպրոց հաճախելուն պատրաստ լինելը կապված է երեխայի օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական և հոգեկան գործընթացների զարգացման որոշակի աստիճանից, որը հնարավորություն է տալիս 6-7 տարեկան երեխաներին հարմարվել նոր պայմաններին, կանոններին, պահանջներին և ավելի մեծ ծանրաբեռնվածությանը: Թեև ուսումնական տարվա սկզբում նրանք հանդիպում են որոշակի դժվարությունների՝ կապված ռեժիմի, ուսումնական և միջանձնային հարաբերությունների հետ, սակայն դրանք աստիճանաբար հաղթահարվում են:

Խնդիրը նկատելի բարդանում է, երբ դպրոց հաճախող երեխան ունենում է տարաբնույթ դժվարություններ, օրինակ ձախլիկություն, զարգացման հապաղում, գերակտիվություն, պասիվություն կամ դանդաղաշարժություն:

Դանդաղաշարժությունը համարվում է բարդ մանկավարժական խնդիր և անհրաժեշտ է համապատասխան քայլեր ձեռնարկել, որպեսզի երեխայի մոտ գործունեության տեմպը արագանա, սակայն հաճախ անտեսում են երեխայի անհատական առանձնահատկությունները, հնարավորությունները և դրանց թողած բացասական ազդեցությունն ու հետևանքները:

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ դանդաղաշարժ երեխաների մոտ հաճախ են հանդիպում ներգոյն, նյարդային խանգարումներ ու տագնապներ: Դրանց առաջացման պատճառներից մեկն այն է, որ նրանց ստիպում են գործողություններ կատարել իրենց համար ոչ հարմար տեմպով, որ նրանց անընդհատ շտապեցնում են ու նախատում:

Դանդաղաշարժությունը միգուցե այնքան էլ նկատելի չի եղել մինչ դպրոց հաճախելը, բայց այն դառնում է լուրջ խնդիր ուսումնառության տարիներին և՛ երեխայի, և՛ ծնողի, և՛ ուսուցչի համար: Ուսուցիչը և ծնողները պետք է հանդես բերեն համբերություն, փորձեն երեխային մոտիվացնել, հնարավորինս նրա գործողությունների տեմպը արագացնել, օգնել, խրախուսել ջանքերը և չպահանջել ավելին՝ քաջ գիտակցելով, որ դանդաղաշարժ երեխան ցանկության դեպքում անգամ չի կարող սանգվիինիկի տեմպին հասնել: Դանդաղաշարժ երեխաները չեն սիրում խաղալ կամ քիչ են խաղում հասակակիցների հետ, որի պատճառով էլ հաճախ տխուր են, անտարբեր ու դանդաղկոտ: Նրանք պասիվ են, ծուլ, ունեն գիրանալու հակում: Նրանք կամ տառապում են ավելորդ քաշից, գիրությունից, կամ քաշը նորմայից ցածր է: Դանդաղաշարժները ռիզիկո են, ոչ ճկուն ու անտարբեր: Ծուլությունը դրսևորվում է մտավոր, ֆիզիկական ու հուզական ոլորտներում:

Երբ երեխան փոքր տարիքում փորձում էր ինքնուրույն կոճկել հագուստի կոճակը, կապել կոշիկների կապերը, գոտին ամրացնել... նա այդ ամենը կատարում էր դանդաղ, անվարժ ու մեծ դժվարությամբ, քանի որ ոչ միայն հմուտ չէր, այլև ուներ խնդիր: Ծնողների չիմացությունն ու անտեղյակությունը հաճախ զայրացնում էր նրանց երեխայի դանդաղաշարժության պատճառով: Խնդիրը ավելի է խորանում, երբ տանը ծնողներն են շատ ակտիվ, եռանդուն ու գործունյա:

Վ. Շիշկինսան նշում է. «Նման դեպքում փորձեք պատկերացնել (ծնողներ, ուսուցիչներ), որ ձեզ, ենթադրենք, ամեն օր անընդհատ ասում են, որ դուք պետք է ավելի բարձրահասակ լինեք, դրանից որևէ բան կարող է փոխվել: Կամ պատկերացրեք, որ երեխային օրեցօր առավոտից մինչ երեկո շտապեցնում են, արդյունքում հոգնածությունից և շփոթվածությունից նա ավելի դանդաղաշարժ է դառնում: Փորձեք զսպել ձեզ և մի շտապեցրեք երեխային, թույլ տվեք նրան շարժվել իրեն հարմար տեմպով» [3, 17]:

Դանդաղաշարժ երեխայի դժվարությունները առավել ակնհայտ են դառնում ուսումնառության տարիներին, հատկապես տարրական դասարաններում: Որոշ ծնողներ և որոշ «փորձառու» ուսուցիչներ դանդաղկոտությունը համարում են երեխայի քմահաճույք, կարծում են, որ նա կամակորություն է անում: Իրականում *դանդաղաշարժությունը երեխայի առանձնահատկություններից է:*

Դանդաղաշարժության պատճառներից են.

- սուր կամ քրոնիկ հիվանդությունները որոնք նպաստում են երեխայի գործողությունների ռիթմի և տեմպի դանդաղեցմանը,
- մոր ծանր հղիությունը և դժվար ծննդաբերությունը,
- գլխուղեղի ենթակեղևային կառուցվածքների վնասվածքը, որի պատճառով էլ թույլ է ակտիվությունը, և կարծես «ուղեղը քնում է»,
- ուղեղի դիսֆունկցիան և այլն:

Երեխան դպրոցում դժվար է հարմարվում իր այդ առանձնահատկության պատճառով, չի ցուցաբերում ուսումնական բարձր առաջադիմություն, նրան անընդհատ սկսում են նախատել դանդաղկոտության, չհասցնելու, ուշանալու համար:

Բոլորը (ուսուցիչ, ընկերներ, ծնողներ) շտապեցնում են նրան, պիտակավորում, որը երեխային էլ ավելի է լարում ու նյարդայնացնում: Այդ երեխաները լարվում ու շփոթվում են, երբ նրանց գրատախտակի մոտ են կանչում, նրանք լռում են նույնիսկ այն դեպքում, երբ սովորել են դասը: Նրանք լարվում են, տագնապում, կաշկանդվում, երբ ուսուցիչը բողոքում է ծնողներին նրա անուշադրության, թափափվածության, ցրվածության, ցածր առաջադիմության ու անտարբերության համար:

Սակայն այդ երեխաները սիրով զբաղվում են ձեռքի աշխատանքով և ունենում են հաջողություններ: Նման անհատական, մանրակրկիտ, նույնիսկ միօրինակ աշխատանքում դանդաղաշարժ երեխան կարող է հաջողություններ գրանցել նաև այլ բնագավառներում:

«Եվ եթե նման երեխային թեստավորեն հանգիստ պայմաններում, ապա կպարզվի, որ նա ոչնչով չի զիջում մյուս երեխաներին և բոլոր ուսումնական առաջադրանքները նրան մյուսների նման հեշտ են տրվում» [1, 28]: Արժե, որ այդ հանգամանքի վրա ևս ուշադրություն դարձնեն ուսուցիչներն ու ծնողները: Բհարկե, նրանք պետք է լավ իմանան նման երեխաների բնորոշ առանձնահատկությունները, իմանան, որ նրանց խնդիրը ներքին տեմպի և կյանքի ռիթմի անհամապատասխանությունն է, որ դանդաղաշարժ երեխայի նյարդային համակարգության տիպը թույլ է, ռեակցիան՝ նույնպես:

«Հարկավոր է թույլ տալ երեխային, որ նախաձեռնություն հանդես բերի՝ հիշեցնելով նրան, երբ նա ակնհայտորեն մոռանում է իր պարտականությունները: Սակայն չի կարելի առանց պատճառի նախօրոք շտապեցնել, չի կարելի չափից ավելի հաճախ հիշեցնել, որովհետև երեխան ինքն էլ է ուզում ամեն ինչ անել ժամանակին և ինչպես հարկն է, որը, սակայն, չի ստացվում» (4, համացանց):

Դանդաղաշարժ երեխաները չեն սիրում փոփոխություններ, աղմուկ, բազմամարդ միջավայր, նրանց դիմախաղը աղքատ է, ձայնը՝ ցածր, խոսքի տեմպը դանդաղ: Նրանք սիրում են քնել, ինչը իրենց մոտ արագ և հեշտ է ստացվում, սակայն դժվարությամբ են արթնանում: Նրանք դժվարությամբ են մերվում կոլեկտիվի հետ, չեն սիրում մասնակցել տոների, նրանք ընդհանրապես այքի չեն ընկնում մարդամոտությամբ: Նրանց պետք է անընդհատ քաջալերել, գովել: Խուսափում

են այնպիսի իրավիճակներից, միջոցառումներից, մրցակցությունից, որտեղ կարող է պարտվել (կհուսահատվի): Նրանց նյարդայնացնում են թեստերը, ստուգողական աշխատանքները, իսկ ֆիզկուլտուրայի դասը, իսկական փորձություն է, քանի որ չեն սիրում մրցակցությունը: Բայց սա չի նշանակում, որ պետք է զերծ պահել ֆիզկուլտուրայի դասերից, ընդհակառակը՝ նրանց պետք է ընդգրկել, սակայն առանց լուրջ մրցակցային տարրերի: Սպորտը, ֆիզիկական ակտիվությունը անհրաժեշտ է ցանկացած երեխայի մկանները, մարմինը մարզելու, զարգացնելու արագությունը, ճկունությունը, ճարպկությունը, որոնց արդյունքում ավելի արագ են զարգանում ճանաչողական պրոցեսները, իսկ երեխան ավելի դիմացկուն ու առողջ է դառնում:

Ճկունությունը կարևոր է ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր զարգացման համար: Պ. Բլունսկին նշել է. «Կրտսեր դպրոցականի առողջության համար ֆիզիկական դաստիարակության 1-ին աստիճանը հանդիսանում է ճարպկության զարգացումը, որը տալիս է աշխատանքի մաքսիմալ արդյունք, քիչ էներգիա ծախսելով» [2, 259]:

Դպրոցներում աշխատող ոչ բոլոր ուսուցիչներն են, որ կարողանում են դանդաղաշարժ երեխաների հետ համապատասխան աշխատանք կատարել, որը հանգեցնում է անհարկի լարվածության, նյարդայնության, սթրեսների խաթարելով նրանց հոգեկան անդորրը, վարքը, հուզական ոլորտը: Նրանց հետ աշխատելիս ուսուցիչը պետք է իմանա, որ նման երեխաների մոտ ցածր է աշխատունակությունը, և նրանք շատ շուտ են հոգնում: Պետք է հանդես բերի անհատական մոտեցում, համբերատարություն, իմանա վերը նշված պատճառները և ամեն կերպ աջակցի նման երեխաներին՝ մոտիվացնելով ու քաջալերելով անգամ ամենափոքր հաջողությունը:

Հետազոտության համար ընտրել ենք 9 դանդաղաշարժ երեխա (Վ. Համբարձումյանի անվ. թիվ 25 հիմնական դպրոցի I և II դասարաններից 4 հոգի, Հ. Թումանյանի անվ. թիվ 3 հիմն. դպրոցի II ա և II բ դասարաններից՝ 5, ընդհամուր՝ 9 դանդաղաշարժ աշակերտ):

Աշխատանքային պրակտիկայում կիրառել ենք Դ. Ռայգորոդսկու «Տազնապախտվության սանդղակ» և Դ. Ռասելի և Մ. Ֆերգյուսոնի «Միայնակության սանդղակ» մեթոդիկաները, ինչպես նաև ստորև նշված մոտեցումները, որոնք որոշակի հաջողությամբ են պսակվել:

- Երբ ասում է, որ այսքանն եմ կատարել, խնդիր չեմ ստեղծում, չեմ բարկանում, այլ հորդորում եմ, որ հաջորդ անգամ աշխատի ավելի արագ ու առաջարկում եմ անցնել հաջորդ հանձնարարությանը (մաթեմատիկա, մայրենի):
- Երբ թելադրություն է, աշխատում եմ տեմպը մի փոքր հարմարեցնել դանդաղաշարժ երեխայի տեմպին
- Պատեհ առիթը օգտագործում եմ ձեռքը մկրատ, վրձին, մատիտ տալու, որպեսզի աջ ձեռքը հաճախ օգտագործի, մարզի և գործունեության տեմպը աստիճանաբար կարագանա:

- Փոքր ծավալի արտագրություններ եմ հանձնարարում
- Օնոդներին առաջարկում եմ նմանատիպ երեխաներին մասնակից դարձնել կենցաղային գործերին, որպեսզի ձեռքերը, մասնավորապես աջ ձեռքը անընդհատ աշխատի և մարզվի:
- Կիրառում եմ համագործակցային մեթոդը, ենթադրենք՝ 2 կամ 4 հոգով և տրվում է կոնկրետ ժամանակ՝ առաջադրանքը կատարելու: Եթե առաջին անգամ ձախողում է, տրվում է 2-դ հնարավորությունը և աշակերտը ի մի է բերում իր հնարավոր ուժերը և էլի նկատում ենք որոշակի հաջողություն:
- Տայիս եմ հանձնարարություն (իր համար հասանելի), որպեսզի մեծանա պատասխանատվությունը, իր ուժերի հանդեպ հավատը, նվազի տագնապը և ամենակարևորը, չառաջնորդվի կարծրատիպերով, թե միննույն է, ինքը ոչինչ անել չի կարող, ինքը չի հասցնի...
- Քաջալերում եմ անգամ աննշան հաջողությունը և այլն:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում եկանք այն եզրակացության, որ ծնողները, ուսուցիչները, դպրոցի հոգեբանը, հատուկ մանկավարժը և այլք պետք է աստիճանաբար զարգացնեն տվյալ իրավիճակում կողմնորոշվելու ընդունակությունը, արագությունը, հետաքրքրությունը շարժումների և շարժողական խաղերի ու գործունեության նկատմամբ: Այդ ամենը պետք է լինի ոչ ստիպողաբար և չպետք է վախենալ, թե երեխան կհոգնի: Շարժողական գործողությունները, խաղերըրը ակտիվացնում են ուշադրությունը, մտածողությունը և այլ հոգեկան գործընթացներ: Լավ իմանալով նման երեխաների ուժեղ և թույլ կողմերը կարելի է նվազեցնել նրանց անվստահությունը, մեծացնել շփվելու կարողությունը, ուսման նկատմամբ հետաքրքրությունը և հարմարվելու կարողությունը:

Նմանատիպ երեխաների հետ աշխատելիս, իհարկե նոր միջոցներ դեռևս կգտնեն և՛ հոգեբանները, և՛ մանկավարժները, պարզապես պետք է հանդես բերել օգնելու մեծ ցանկություն, համբերություն և պատրաստակամություն, քանի որ դանդաղաշարժ երեխաները ունեն ծնողների, ուսուցչի, դպրոցի հոգեբանի և այլ մասնագետների ուշադրության և աջակցության կարիքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Պետրովսկու խմբ., Լույս հրատ. Երևան, 1977, 398 էջ:
2. Мир детства, Младший школьник, под ред. А. Хрипковой, 2-е изд., М., 272 с.
3. Шишкина В, Движение + джижение, М. 2008, 96 с.
4. babycare.am (դանդաղաշարժ-երեխաներ):

Особенности работы с медлительными детьми

Джаназия Жанета

Резюме

Ключевые слова: тревожность, учебная мотивация, учебный процесс, страхи, успеваемость, учитель

В статье обсуждаются трудности медлительных детей в школе в процессе обучения. По этой причине ребенок становится напряженным, неуверенным, тревожным и нервным. Снижается успеваемость, ухудшаются межличностные отношения с одноклассниками и учителями.

В статье рассматриваются страхи и тревожность по отношению к школе, присущие медлительным детям. В зависимости от своих индивидуальных особенностей дети с трудом адаптируются к школе. У них низкая мотивация к учению, их постоянно обвиняют в медлительности, неуспеваемости и опозданиях. Самым трудным для первоклассника является процесс письма. У них обычно плохой почерк, они пропускают буквы, а чтение становится настоящим испытанием. Своей медлительностью они нарушают ритм работы учителя и всего класса. Эти дети скованы и напряжены, затрудняются отвечать у доски, они молчат даже тогда, когда знают правильный ответ. Их раздражают тесты и контрольные работы. Также не любят уроки физкультуры из-за соревновательности. В связи с этим повышается роль учителя в работе с такими детьми. В статье указываются некоторые пути преодоления проблемы.

The Peculiarities of Working with Sluggish Children

Janazyan Zhaneta

Summary

Key words: *Uneasiness, motivation in studies, teaching process, fears, not making progress, a teacher*

In this article we discuss the difficulties that the sluggish pupils usually have at school, during their educational process. Children usually have tension, uncertainty, fear and nervousness because of that problem. In that case they usually don't make progress in their studies and can even have problems in their interpersonal relationships.

In this article the fears, that are peculiar to tardy children, and also their anxiety in school surroundings are discussed. The child's adaptation to school is often too hard because of his/her peculiarities, the motivation for studies is too low, he is often blamed for being late and sluggish. They usually have another great problem (and especially in the first year of their studies) – it is writing. They often have bad handwritings, they often miss some letters in words and thus reading becomes a real trial for them. With their sluggishness, they break the normal rhythm of the entire class and teacher's work. In these cases the teacher has to make some corresponding changes in the daily plan. These children get nervous and become embarrassed, when they are asked to come to the blackboard and write something on it. They become unwilling to answer any question, even if they know what to say. The children get irritated, when they are given tests. They also dislike the lessons of Physical Education, as they do not like competition.

Thus, the role of a teacher becomes more important as s/he faces different problems, which s/he has to solve on her/his own. As a consequence, there are presented some ways of overcoming the difficulties, in the article.